

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի դեկտեմբերի 12-ին կայացավ «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի արհեստակցական կազմակերպության կոնֆերանսը, որին մասնակցում էին համալսարանի բոլոր ստորաբաժանումներից ընտրված 66 պատվիրակներից 59-ը:

Կոնֆերանսը սկսեց արհկոմի նախագահ Վալերի Խաչատրյանը: Նշելով, որ ըստ արհեստակցական կազմակերպության կանոնադրության կոնֆերանսը իրավագոր է, եթե նրա աշխատանքների մասնակցում են ընտրված պատվիրակների կեսից ավելին:

Կոնֆերանսի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Վ. Խաչատրյանը խնդրեց կոնֆերանսի աշխատանքները ղեկավարելու համար տալ նախագահի և քարտուղարի թեկնածություններ:

Առաջարկ եղավ նախագահի թեկնածու առաջադրել Ազատ Մաթևոսյանին, իսկ քարտուղար՝ Տաթևիկ Մինասյանին: Քվերակության արդյունքում երկու թեկնածուներն էլ անցան միաձայն: Նախագահողը ներկայացրեց կոնֆերանսի օրակարգը և քվերակությամբ սահմանեց ժամանակացույց հաշվետվությունների և ելույթների համար:

Օրակարգ

1. Արհեստակցական կազմակերպության նախագահի 2012-2017թթ. գործունեության հաշվետվություն:

Ձեկուցող՝ Վ. Խաչատրյան

2. Արհեստակցական կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի 2012-2017թթ. ֆինանսական հաշվետվություն:

Ձեկուցող՝ Գ. Ասատրյան

3. Արհկոմի և վերստուգիչ հանձնաժողովի նախագահների ընտրություն:

Հաշվետվության համար ձայն տրվեց արհեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյանը, նա ներկայացրեց 2012-2017թթ. արհկոմի կատարած աշխատանքները: Կից ներկայացնում եմ հաշվետվությունը.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Զեկուցող՝ ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպության նախագահ՝

պրոֆեսոր Վ.Խաչատրյան

ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը համալսարանի աշխատողների կամավոր միավորում է, որը ստեղծվում է նրանց գործունեությունը համակարգելու, աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու ու պաշտպանելու համար:

ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունն ի սկզբանե իր կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու նպատակով՝ հստակեցրել է իր գործունեության հիմնական ուղղությունները.

1. Մասնակցել գործատուի կողմից արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերի շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին.
2. ՇՊՀ-ի աշխատողների աշխատանքային, սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով նախաձեռնել ու գործատուի հետ կնքել կոլեկտիվ պայմանագիր, հսկողություն իրականացնել դրա կատարման նկատմամբ.
3. Համաձայն գործող օրենսդրության մասնակցել կոլեկտիվի աշխատանքային վեճերի կարգավորմանը.
4. Համալսարանի ղեկավարության առջև հանդես գալ ներքուհական կյանքին վերաբերվող նախաձեռնություններով:

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ի արհկոմի աշխատանքները կրել են սոցիալական բնույթ:

Արհկոմի գործունեության արդյունավետությունը, աշխատողների շահերի պաշտպանությունը հիմնականում պայմանավորված են անհատական և կոլեկտիվ պայմանագրերով: Հաշվետու ժամանակահատվածում Արհկոմը գործատուի հետ կնքեց նոր կոլեկտիվ պայմանագիր, իսկ աշխատողների հետ անհատական պայմանագրեր:

Կոլեկտիվ պայմանագրի առարկան գործատուի կողմից աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության և դրանց հետ կապված սոցիալական հարցերի լուծման համար տրամադրվող երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ, օրենսդրության հետ համեմատ, լրացուցիչ դրույքների սահմանումն է:

Հաշվետու ժամանակահատվածում Արհկոմը կազմակերպել և անցկացրել է տարբեր տեսակի ու բնույթի միջոցառումներ՝ նվիրված «Մեծ Հաղթանակին», «Եղեռնին», «Դեկտեմբերի 7-ին», «Մայրության և Գեղեցկությանը», «Ամանորին»: Միշտ ծաղկեպսակներով և ծաղիկներով այցելել ենք «Մեծ Հաղթանակին», «Շուշիի ազատագրմանը», «Եղեռնի զոհերին» և «Դեկտեմբերի 7-ին» նվիրված հուշարձաններին:

Կազմակերպել է ուղևորություններ դեպի պատմամշակութային հուշարձաններ (Գոշավանք, Հաղարծին, Հաղպատ, Սանահին, Ախթալայի վանք, Էջմիածին, Խոր Վիրապ, Մուղնի, Սաղմոսավանք):

Արհկոմը հաճախակի կազմակերպել է հանգստի միջոցառումներ բնության գրկում (ամեն տարի) և շատ դեպքերում ամբողջ ծախսը կատարել է իր ֆինանսական միջոցների հաշվին: Իսկ Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնակատարությունները ամեն տարի մեծ շուքով է կազմակերպել. հրավիրել է Երևանի և Գյումրու տիկնիկային թատրոնների դերասանների՝ համալսարանում կազմակերպելով տոնական միջոցառում-ներկայացում, իսկ աշխատակիցների մինչև 10 տարեկան թոռներին ու երեխաներին նվիրել տոնական պարկեր և Ամանորյա ուրախ ներկայացումների տոմսեր և այս ամենը միայն իր ֆինանսական միջոցներով: Անցյալ տարի համալսարանում կազմակերպեց Ամանորյա մեծ միջոցառում-հյուրասիրություն՝ աշխատակիցներին նվիրելով տոնական նվերներ, իսկ ուսանողության և աշխատողների համար կազմակերպեց համերգային ծրագիր Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ երգիչ Ֆորշի և իր խմբի մասնակցությամբ:

Ավանդույթի համաձայն, մեծ շուքով է կազմակերպել «Մայրության և Գեղեցկության» տոնը. հրավիրել է ջութակահարների քառյակ և բոլոր կանանց ու աղջիկներին նվիրել ծաղիկներ ու հրաշալի երաժշտություն:

Արհեստակցական կազմակերպությունը մասնակցել ու օժանդակել է ֆակուլտետներում կազմակերպվող միջոցառումներին (նաև ֆինանսապես), իսկ 2017թ. ՇՊՀ-ի ավագ դպրոցում կազմակերպված «Հարիսայի տոն» միջոցառման ամբողջ ծախսը հոգաց Արհկոմը:

Հաշվետու ժամանակահատվածում կենսաթոշակի անցած մեր աշխատակիցներին ճանապարհեցինք հանգստի՝ ծաղիկներով ու նվերներով:

Արհկոմը մասնակցել է նաև մագիստրոսների ամենամյա ավարտական միջոցառումներին՝ աջակցելով նաև ֆինանսապես (վճարել է երաժիշտներին և կազմակերպել՝ տոնական հյուրասիրություն համալսարանի այգում):

Մասնակցել ենք նաև Անկախության տոներին, իսկ Անկախության 25-ամյակի միջոցառումը նշվեց և տոնվեց մեծ շուքով Թորոս գյուղում, որին մասնակցում էր համալսարանի ողջ կոլեկտիվը և հոգաց նաև ֆինանսական ծախսերի զգալի մասը:

Հաշվետու ժամանակահատվածում Արհկոմը գործատուի հետ համատեղ քննարկել և հստակեցրել է ինստիտուտի 80-ամյակի կապակցությամբ պարգևատրվողների ցուցակները: Արհեստակցական կազմակերպության խորհրդի որոշմամբ, կազմակերպության 6 անդամներ ներկայացվել են Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվոգրերով պարգևատրելուն: Քանի որ Արհկոմի նախագահը նկարիչ է, ակտիվորեն մասնակցել է 80-ամյակի միջոցառման բեմի, գրքի, հրավիրատոմսերի, տոնական պարկերի, բանների և նոթատետրերի ձևավորմանը:

Արհկոմը հաշվետու ժամանակահատվածում մեկ անգամ դատարանում պաշտպանել է աշխատողների շահերը՝ վարձելով և վճարելով փաստաբանին:

Իսկ այս տարի ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը մասնակցեց մի գեղեցիկ միջոցառման, որը նախաձեռնել էին ռեկտորը, ՈւԽ-ն և արհեստակցական կազմակերպությունը - այն է՝ Գյումրու անօթևան ընտանիքներից մեկին բնակարանով ապահովելու գործընթացին՝ Գյումրի քաղաքի «Գյումրին առանց տնակների» կազմակերպության հոգաբարձուների խորհրդի հետ համատեղ մեր համալսարանի անօթևան ուսանողներից մեկին բնակարանով ապահովելով (Արհկոմի խորհրդի որոշմամբ 1000000 դրամ ենք տրամադրել):

2016թ. փոխվեց բուհի կարգավիճակը՝ դառնալով «Շիրակի Պետական Համալսարան» հիմնադրամ:

Ընդհանուր ժողովով փոխվեց նաև արհեստակցական կազմակերպության կանոնադրությունը՝ համապատասխանեցնելով ՇՊՀ-ի կանոնադրությանը:

Բայց Արհկոմի խնդիրները մնացին անփոփոխ - աշխատողի շահերի պաշտպանություն, սոցիալական վիճակի բարելավում:

Արհեստակցական կազմակերպությունը մասնակցել ու մասնակցում է համալսարանում իրականացվող կառուցվածքային փոփոխությունների գործընթացին:

Արհկոմի նախագահը հաճախակի է հանդիպում համալսարանի ռեկտորի հետ, քննարկում՝ կատարվող փոփոխությունները:

2016թ. Արհեստակցական կազմակերպության նախագահը խորհրդի որոշմամբ դիմեց ռեկտորին բարելավելու համալսարանի ճաշարանը և ձևափոխելով արդիականացնել նիստերի դահլիճը համապատասխանեցնելով դրանք համալսարանի կարգավիճակին: Եվ այսօր մենք ունենք այս հրաշալի դահլիճը և բարեկարգ ճաշարան:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր խնդրանքին ընդառաջելու համար:

Արհկոմը միշտ աջակցել ու աջակցելու է համալսարանում իրականացվող այն գործընթացներին, որոնք կոչված են բարելավելու համալսարանի աշխատակիցների սոցիալ-տնտեսական վիճակը, համալսարանի հեղինակության բարձրացմանը:

Արհեստակցական կազմակերպությունը սերտ համագործակցության մեջ է նաև ուսանողական խորհրդի հետ: Օժանդակում է նրա կազմակերպած միջոցառումներին նաև ֆինանսապես:

ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը մեծ ուշադրություն է դարձնում համալսարանի սոցիալապես անապահով աշխատակիցներին օժանդակելուն և աջակցելուն: Արհկոմն իր ֆինանսական միջոցների 60% հատկացնում է կոլեկտիվի սոցիալ-տնտեսական, մշակութային միջոցառումներին, անհատական ֆինանսական օգնություններին և աջակցություններին: Արհկոմը իր խորհրդի որոշումներով ընդառաջում է օգնության խնդրանքով դիմած իր աշխատակիցներին և՛ ֆինանսապես, և՛ բարոյապես:

Արհկումի ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից, որի միայն 40% է հատկացվում աշխատավարձի:

Արհեստակցական կազմակերպությունը հետևողականորեն և միշտ կազմակերպում է խորհրդի նիստեր, որոնց ժամանակ քննարկվում են ֆակուլտետներում առկա խնդիրները և անհրաժեշտության դեպքում հարցը բարձրացվում է ռեկտարատում: Խորհրդի որոշմամբ են իրականացվում բոլոր տեսակի ֆինանսական օգնություններն ու աջակցությունները:

Արհեստակցական կազմակերպության համար համալսարանի շահը միշտ գերադասելի է անձնական անհատական շահից՝ անկախ անձի գրաված դիրքից ու պաշտոնից:

Արհեստակցական կազմակերպությունը ցավով ու մտահոգությամբ է արձանագրում, որ լինում են նաև կենսաթոշակային տարիքի պատճառով կրճատումներ: Դժվար է, բայց ուրիշ ճանապարհ չկա և Արհկումը հետևողական է այդ գործընթացներին, որոնք իրականացվում են օրենքի տարրին համահունչ: Մենք հասկանում ենք նաև, որ եթե գործը մեծ է կարող են լինել նաև բացթողումներ, սխալներ, թերացումներ և ուզում ենք նշել, որ արհկումի խնդիրը չէ միայն մատնացույց անել եղած բացթողումներն ու թերությունները, այլ համատեղ ուժերով այն շտկելն է:

Արհեստակցական կազմակերպության գործունեությունը եղել է թափանցիկ: Նախագահը միշտ հանդես է եկել հաշվետվություններով, որոնք և տեղադրվել են համալսարանի կայքում և հասանելի են յուրաքանչյուրին:

Ասածներին հաստատումն է նաև, վերջերս հանրապետական ճյուղային բաժնի իրականացրած ստուգայցը, որի արդյունքում չարձանագրվեց ֆինանսական չարաշահումներ և գործունեության խախտումներ:

Արհեստակցական կազմակերպության գործունեությունը վերահսկվում է վերստուգիչ հանձնաժողովի կողմից, որը և հանդես է գալիս տարեվերջյան հաշվետվությամբ:

Ես իմ շնորհակալությունն եմ ուզում հայտնել արհկումի խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին՝ Մարիամ Հարությունյանին, Գևորգ Ասատրյանին, Արտակ Հովհաննիսյանին, Աշխեն Տոնոյանին, Գևորգ Աղանյանին, Բագրատ Պողոսյանին, Բաբկեն Սերոբյանին, Էմմա Սուվարյանին համատեղ

աշխատանքի համար և անպայման հիշել Լաուրա Աթանեսյանին, ով կյանքից անժամանակ հեռացավ(նա վերստուգիչ հանձնաժողովի նախագահն էր):

ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը գործել և գործում է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ արհեստակցային կազմակերպությունների մասին օրենքի», «ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպություն» կանոնադրության և «ՇՊՀ-ի կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Մենք ունենք նաև չարված շատ աշխատանքներ, թերացումներ.

1. Չկարողացանք հասնել այն բանին, որ մեր աշխատակիցները ունենան առողջության ապահովագրություն և սոցիալական փաթեթ,
2. Բազմիցս առաջարկել ենք, որ տարին 1-2 անգամ համալսարան հրավիրվեն բժիշկ-մասնագետներ բուժզննում անցկացնելու համար, մասամբ մեր աշխատակից բժիշկների աջակցությամբ, ինչպես նաև ունենալ հոգեբանական աջակցության սենյակ,
3. Անհրաժեշտ էր կարգավորել ծննդօգնության խրախուսման գաղափարը՝ դարձնելով այն պարտադիր(երբ նայում ենք մեր տարեկան ծախսերի վերջնարդյունքին ծաղկեպսակների համար հատկացվել են միլիոններ, ծննդօգնությանը՝ 0 դրամ),
4. Կարելի էր աշխատանքներ տանել Գուլագարակի գեոֆիզիկայի բազան մասամբ համալսարանի հանգտի գոտի դարձնելու ուղղությամբ (ստեղծելով տարրական կենցաղային պայմաններ),
5. Չկարողացանք հստակեցնել իրական սոցիալական անապահովների ցուցակը:

Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվության համար ձայն տրվեց Գևորգ Ասատրյանին:Նա ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածի 2012-2017թթ. կատարած ֆինանսական ծախսերը՝ մուքերն ու ելքերը: Կից ներկայացնում են հաշվետվությունը.

ՇՊՀ-ի 2012-2017թթ.

Արհեստակցական կազմակերպության Վերստուգիչ Հանձնաժողովի Ֆինանսական հաշվետվություն

Ձեզ եմ ներկայացնում ԳՊՄԻ, իսկ այնուհետև ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպության ֆինանսական գործունեության 2012-2017թթ. համապարփակ հաշվետվությունը:

Նախ նշեմ, որ Վերստուգիչ Հանձնաժողովը իր կանոնադրական խնդիրները կատարել է պատշաճ մակարդակով: Յուրաքանչյուր երեք ամիսը մեկ կատարել ենք մասնակի ստուգումներ ֆինանսական ծախսերի մասով, իսկ յուրաքանչյուր տարվա ավարտին, Արհեստակցական կազմակերպության նախագահի հաշվետվության հետ մեկտեղ Վերստուգիչ Հանձնաժողովը նույնպես հանդես է եկել հաշվետվությամբ:

Երբ նայում ենք Արհեստակցական կազմակերպության ծախսերին, նկատելի է, որ Արհկոմի գործունեությունը կրել է սոցիալական բնույթ և ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակին և արդարացված: Արհեստակցական կազմակերպության ծախսերի մեջ մեծ տոկոս են կազմում ֆինանսական օգնություններն ու աջակցությունները, միջոցառումների, ինչպես նաև ծաղկեպսակների համար ծախսված միջոցները:

Իմ ասածների հաստատումն են նաև, վերջերս հանրապետական ճյուղային բաժնի իրականացրած ստուգումները և՛ ֆինանսական ծախսերի մասով, և՛ Արհկոմի գործունեության թափանցիկության վերաբերյալ, որում ոչ մի խախտում կամ չարաշահում չարձանագրվեց:

Իսկ այժմ ձեզ եմ ներկայացնում Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվությունը Արհեստակցական կազմակերպության 2012-2017թթ. ֆինանսական մուտքերի, ծախսերի ու ելքերի վերաբերյալ:

Ըստ կոնֆերանսի կանոնադրության ձայն տրվեց ելույթների համար:

Ելույթ ունեցավ Մայադ Մինասյանը, Գևորգ Աղանյանը, Ազատ Մաթևոսյանը: Նրանք ընդգծեցին Արհկոմի, նրա նախագահի կատարած աշխատանքները համալսարանում առկա խնդիրների և նրանց լուծման ճանապարհների մասին:

Սայաթ Մինասյանը, որը ներկայացնում է տնտեսական բլոկ, խոսեց իրենց ստորաբաժանման խնդիրների մասին, շնորհակալություն հայտնեց և՛ արհկոմին, և՛ համալսարանի ղեկավարությանը կատարած աշխատանքների համար և որոշ նկատառումներ, որոնց հարկ է ուշադրություն դարձնել:

Նախագահողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

Արտահայտվեց նաև հանրապետական ԲՈՒՀ-երի ճյուղային բաժնի ղեկավար Գառնիկ Վաղարշակյանը: Նա շնորհակալություն հայտնեց համալսարանի ղեկավարությունը արհկոմի հետ կոնստրուկտիվ համագործակցության և ուշադրության համար:

Նա խոսեց ԲՈՒՀ-երի առկա խնդիրների և նրանց լուծման ուղիների մասին: Վաղարշակյանը նշեց, որ շատ արդյունավետ են համագործակցում ՇՈՀ-ի արհեստակցական կազմակերպության և նրա նախագահի հետ:

Օրակարգային հաջորդ հարցը ընտրությունն էր: Նախագահողը խնդրեց առաջադրել խորհրդի անդամների թեկնածուներ:

Առաջադրվեցին թեկնածուների անունները: Ըստ ստորաբաժանումների թվով 12 հոգի.

ԱՐՀԿՈՄԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1. Վալերի Խաչատրյան
2. Նարեկ Միրզոյան
3. Մարինա Հլղաթյան
4. Գևորգ Աղանյան
5. Սուրեն Հովսեփյան
6. Լևոն Մարտիրոսյան
7. Գրիգոր Բարսեղյան
8. Թերեզա Խաչատրյան
9. Գեղանի Մարտիրոսյան
10. Աշխեն Տոնոյան
11. Վարդան Մանուկյան
12. Արտուշ Քոչարյան

ԱՐՀԿՈՄԻ ՎԵՐՄՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Գևորգ Ասատրյան
2. Արտակ Հովհաննիսյան
3. Մարիամ Հարությունյան

Հետո տեղի ունեցավ անվանական քվեարկություն, որի արդյունքում բոլոր առաջադրվածները միաձայն ընտրվեցին խորհրդի անդամներ:

Հետո տեղի ունեցավ արհեստակցական կազմակերպության խորհրդի նախագահի թեկնածության առաջադրում: Առաջադրվեց Վալերի Գրիգորի Խաչատրյանը:

Հետո առաջադրվեց արհեստակցական կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի թեկնածություն: Առաջադրվեց Գևորգ Ասատրյանը:

Չեղան ուրիշ առաջադրվողներ:

Քանի որ մեկ թեկնածու էր, կոնֆերանսի առաջարկով ընտրությունը կատարվեց բաց քվեարկությամբ, որին մասնակցեցին ներկա 59 պատվիրակները:

Ըստ Արհեստակցական կազմակերպության նախագահի ընտրության կանոնադրության թեկնածու համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել են ներկա պատվիրակների կեսից ավելին, (պարզ մեծամասնությամբ):

Քվեարկության արդյունքում պարզվեց, որ Վալերի Գրիգորի Խաչատրյանի օգտին քվեարկել են.

Կողմ – 57

Դեմ – 2

Ձեռնպահ – 0

Արհեստակցական կազմակերպության նախագահ ընտրվեց պրոֆեսոր Վալերի Գրիգորի Խաչատրյանը:

Քվեարկությամբ ընտրվեց արհեստակցական կազմակերպության վերստուգիչ նախագահ՝ Գևորգ Ասատրյանը.

Կողմ – 59

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

Նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց վստահության համար և խոստացավ աշխատել ավելի արդյունավետ ի օգուտ աշխատակիցների և պետական համալսարանի, լինել ավելի ուշադիր ու հետևողական:

Նախագահի ընտրությունից հետո խոսք խնդրեց համալսարանի ռեկտոր Սահակ Մինասյանը (ով պատվիրակ չէ և իրավունք չունի քվեարկելու ու ընտրելու):

Ռեկտորը նույնպես շնորհավորեց նորընտիր նախագահին, ցանկանալով համատեղ արդյունավետ աշխատանք: Նա ընդգծեց, որ միայն համատեղ կոնստրուկտիվ աշխատանքի շնորհիվ է հնարավոր արդյունք ակնկալել: Ինչպես ընդգծեց ռեկտորը Արհկոմը պետք է վերանայի իր գործունեությունը: Արդեն չի բավարարում նախկին աշխատատեղը միայն ֆինանսական օգնության, ծաղկեպսակներ, (որոնց վրա ծախսվում են հսկայական միջոցներ) պետք փոխել աշխատանքների մոտեցման փիլիսոփայությունը:

Նորընտիր նախագահը ընթերցեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Լսելով և քննարկելով ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպության 2012-2017թթ. գործունեության հաշվետվությունը կոնֆերանսը նշում է, որ այդ ժամանակահատվածում կատարվել են որոշակի աշխատանքներ:

Արհեստակցական կազմակերպության աշխատանքներն եղել են թափանցիկ ու հասանելի յուրաքանչյուրին: Գործունեության հաշվետվությունները տեղադրվել են ՇՊՀ-ի կայքում:

Գործատուի հետ իր հարաբերությունները կատարվել են «Կոլեկտիվ պայմանագրով»: Քանի որ տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն ինստիտուտը դարձել է համալսարան-հիմնադրամ. փոխվել է նաև արհեստակցական կազմակերպության կանոնադրությունը համապատասխանեցնելով այն համալսարան հիմնադրամի կանոնադրությունը, մասամբ փոխվել է կոլեկտիվ պայմանագիրը:

Արհեստակցական կազմակերպությունը համալսարանում կազմակերպել է բազմաբնույթ ու բազմաթիվ միջոցառումներ: Միշտ կազմակերպվել են խորհրդի նիստեր և ընդունվել որոշումներ:

Արհեստակցական կազմակերպությունը ակտիվ մասնակցել է բոլոր տեսակի բարեփոխումներին, որոնք ուղղված են եղել բարելավել համալսարանի աշխատողի սոցիալ տնտեսական վիճակը, կրթական մակարդակի և համալսարանի հեղինակության բարձրացմանը, ֆինանսական միջոցները խորհրդի որոշումներով ծախսվել են իր նպատակային:

ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը գործել և գործում է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ արհեստակցային կազմակերպությունների մասին օրենքի», «ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպություն» կանոնադրության և «ՇՊՀ-ի կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Կան նաև թերացումներ և բացթողումներ.

1. Չկարողացանք հասնել այն բանին, որ մեր աշխատակիցները ունենան առողջության ապահովագրություն և սոցիալական փաթեթ,
2. Բազմիցս առաջարկել ենք, որ տարին 1-2 անգամ համալսարան հրավիրվեն բժիշկ-մասնագետներ բուժզննում անցկացնելու համար, մասամբ մեր աշխատակից բժիշկների աջակցությամբ, ինչպես նաև ունենալ հոգեբանական աջակցության սենյակ,
3. Անհրաժեշտ էր կարգավորել ծննդօգնության խրախուսման գաղափարը՝ դարձնելով այն պարտադիր(երբ նայում ենք մեր տարեկան ծախսերի վերջնարդյունքին ծաղկեպսակների համար հատկացվել են միլիոններ, ծննդօգնությանը՝ 0 դրամ),
4. Կարելի էր աշխատանքներ տանել Գուլագարակի գեոֆիզիկայի բազան մասամբ համալսարանի հանգտի գոտի դարձնելու ուղղությամբ (ստեղծելով տարրական կենցաղային պայմաններ),
5. Չկարողացանք հստակեցնել իրական սոցիալական անապահովների ցուցակը:

Լսելով և Քբնարկելով ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպության նախագահի 2012-2017թթ. կայացած աշխատանքների հաշվետվությունը կոնֆերանսը որոշում է աշխատանքները գնահատել **բավարար**:

Կոնֆերանսը որոշում է.

1. Բարիդրացիական կապերը հաստատել հանրապետության մյուս բուհերի արհեստակցական կազմակերպությունների հետ:
2. Աշխատանքները տանել առողջության ապահովագրության ուղղությամբ:
3. Համալսարան հրավիրել բժիշկ-մասնագետները բուժզննում անցկացնելու համար, ստեղծել հոգեբանական աջակցություն սենյակ:
4. Կարգավորել ծննդօգնության խրախուսման գողափարը, դարձնելով այն պարտադիր:
5. Հստկեցնել իրական սոցիալական անապահովների ցուցակը:
6. Ֆիզդաստիարակչական ամբիոնի հետ համատեղ կազմել էքսկուրսիաների և արշավների տարեկան պլան (դեպի պատմամշակութային հուշարձաններ):